Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 9-ի N 836-Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2005 թվականի
օգոստոսի 18-ի N 2085-Ն որոշման

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տեսչական մարմնի տարբերանշանն ունի 90 մմ բարձրությամբ և 65 մմ լայնությամբ վահանի տեսք: Տարբերանշանը բաղկացած է երկու՝ մեծ և փոքր վահաններից: Մեծ կանաչ վահանը շրջագծում է ամբողջ պատկերը, որի եզրերը պատված են հոծ ոսկեգույն գծով, փոքր կանաչ վահանը գտնվում է մեծ կանաչ վահանի կենտրոնում, և վահանի վերևի հատվածն ուղիղ է, որի եզրերը պատված են հոծ ոսկեգույն գծով: Մեծ կանաչ վահանի վերին կենտրոնական հատվածում ոսկեգույնով արտացոլված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» գրառումը, կողային ձախ հատվածում ոսկեգույնով արտացոլված է «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ» գրառումը, իսկ աջ հատվածում ոսկեգույնով արտացոլված է «ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» գրառումը: Փոքր կանաչ վահանի մեջտեղում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը (նկար 11): Վահանները խորհրդանշում են շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության համար սահմանված նորմերի և չափաքանակների նկատմամբ վերահսկողության կատարումը՝ որպես օրենքի պահանջ, կանաչ գույնը խորհրդանշում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը, իսկ զինանշանը խորհրդանշում է Կառավարության ենթակայությունը, բնապահպանության և ընդերքի բնագավառներում՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու իրավասությունը: Կարվում է կիսավերարկուի և վերնաշապիկի ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև:

ՆԿԱՐ 11»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ